

ներով առաջ տանել այդ գործը, Բայց մենք, որ շատ լաւ ենք ճանաչում նրան, գիտենք որ այդպէս հազիւ թէ աշխուրհիւս ունենայ գործը, հազիւ թէ լայն չափերով իրադրութիւն նա: Անձնական միջոցները բոլոր շատ չունի եւ նրա համար այդ հրատարակութիւնները կարող են դառնալ զրկանք, զոհողութիւն:

Պէտք է, ուրեմն, աշխուրհիւս նրան: Դա դժուար բան է: Իւրաքանչիւր բնութիւնը հրատարակութեան համար բաւական է 50—60 բուրձի, այսինքն մի գումար, որ հազիւ է բաւականութեամբ տալիս մեր հարուստներին մի անգամ ընթերցելու համար: Միթէ չը կան մեզանում անհասներ, որոնք կը կամենային տարէնը մի կամ երկու ընթերցանքից զրկել եւ դա փոխարէն հազարներով խելօք, լուսատու գրքեր ցրել մեր խաւար ժողովուրդի մէջ: Զը կան մեզանում այնպիսի չըջաններ, որոնք հաւաքական ոյժերով վերջնէին այդ գրքովներին հրատարակութիւնը: Հարկաւոր է որ շատ էօան լինեն ժողովրդական բնութիւնները, իսկ էօան կը լինեն նրանք միայն այն ժամանակ, երբ հասարակական լայն թափակութիւն կը լինի:

Բարեգործութիւններ էք անում: Մի մոռացէ՛ք, որ իսկական բարեգործութիւնը մեր ժամանակներում ժողովուրդին օգնելն է, նրան մըտաւոր պաշար տալը, նրա աչքը բաց անելը:

Ուրեմն, առաջ եկէ՛ք: Տգիտութիւնը մեզ խելոյում է. գտնէ այսպիսի փորձիկ գործերով կուենք այդ աւաւոր թշնամու դէմ:

Լ.

ԱՐԲԵՑՈՂՈՒԹԻՒՆԸ ԿՈՎԿԱՍՏՈՒՄ

Մենք մի քանի անգամ առիթ ենք ունեցել խօսելու «Մշակի» մէջ արբեցողութեան մասին, բերել ենք մի քանի թւեր, վերջրած եւրօպական կամ ուսաց գրականութիւնից, իսկ Կովկասի վերաբերած ստատիստիկա չենք ունեցել: Այն ինչ այսպիսի մի ստատիստիկա մի հրաժեշտ էր մեր երկրում տարածված արբեցողութեան աստիճանը մօտաւորապէս արդիւն համար:

Բժ. Պանտիւխովը նորերս հրատարակած «Алеголизмъ на Кавказѣ» անունով մի փոքրիկ բնութիւնը մէջ գետնից է մի քանի թւեր մեր երկրում արտադրած ու գործածված սպիրտի քանակութեան մասին:

Ինչպէս յայտնի է, խմիչքի (գինի լինի, թէ արաղ, թէ ուրիշ խմիչք) ներդրածը նիւթը ալիօօնն է կամ սպիրտը: Խմիչքների մէջ կան մի քանի տեսակ սպիրտներ, որոնք տարբեր չափով վնասակար են:

Ակցիդի վարչութեան տուած տեղեկութիւններին նախելով՝ Անգրիկական երկրում 1895-ին ժողոված է եղել 9,900,000 պուդ խաղող, որից քաշած է 4,866,000 վեդրօ գինի: 1897-ին ստացված է 13,036,000 պուդ խաղող եւ քաշած է մօտ 7 միլիօն վեդրօ գինի: 1898-ին—13,826,000 պուդ խաղող, քաշված է 7,777,000 վեդրօ գինի: Հաշուելով, որ մի պուդը

կախերի եւ նրանք կոնսերւտորիայի հետ գրադրութիւն ունեն, որոնց մասին միջին ինստանցիան—հոգեւոր կառավարութիւնն ու փոխանորդը—տեղեկութիւն չունեն: Մի ուրիշ անգամ ստացվում է խիստ պատուէր անմիջական գրադրութիւն չունենալը բարձր ինստանցիայի հետ, այլ մեծաւոր իշխանութեան միջոցով, բայց հենց մի եւ նոյն պատուով ստացվում է մի թուղթ արդէն միջին ինստանցիան անաւես արված:

Ամենից շատ խառնափնթորութիւն տիրում է Երեւանի թեմում, եւ դա երկու հիմնական պատճառով. նախ՝ որ շատ մեծ է, երկրորդ՝ որ այդ թեմը համարվում է կաթողիկոսական թեմ:

Երեւանի թեմը միակն է, որ ունի հինգ փոխանորդութիւն՝ Տաթևի, Հին-Նախիջևանի, Ալեքսանդրօպոլի, Երեւանի եւ Կարսի: Այդ փոխանորդութիւններից Երեւանը ունի կոնսերւտորիա, իսկ միւսները՝ հոգեւոր կառավարութիւններ. սովորաբար Երեւանի փոխանորդը նշանակվում է եպիսկոպոսներից, մինչդեռ պատահել է, որ Երեւանի փոխանորդը եղել է վարդապետ, իսկ միւս փոխանորդներից՝ եպիսկոպոս: Երեւանայեցիք այժմ կառավարչութիւնը, երբ կոնսերւտորիան պիտի կառավարէ անհազին տարածութիւն բնօղ, ամենահաջաւատ եւ բազմադիւղ այդ թեմը. բայց անհ գտել են թեթեւացնելու համար: Երեւանի թեմի փոխանորդութիւնները, անկախ կոնսերւտորիայից, սինօքի են եւ ունեն գրադրութիւն գրամականի մի մասը վերաբերելով թեմում:

Երբեմն Երեւանի թեմում գրամական գործերն այնպէս են խճճվում, որ մարդ տարինե-

խաղողից քաշվում է մի վեդրօ գինի, մենք անտեսում ենք, որ մեր երկրի արդիւնաբերած խաղողի միմիայն կէսն է գինի չինվում, իսկ մնացածից արաղ է քաշվում:

Սպիրտի քանակութիւնը արաղ աւելացել է ութսունական թւականներից յետոյ:

Այսպէս, 1876-ին քաշված է 10¹/₂ միլիօն աստիճան սպիրտ, այն ինչ 1898-ին քաշված է եղել 25¹/₂ միլիօն *): Սպիրտը մեզ մօտ քաշվում է գլխաւորապէս գինեգործութիւնից մնացած նիւթերից, շատ փոքր մասը—թութից, եւ ուրիշ մրդերից: Թութից քաշվում է 6¹/₂ միլ. աստիճան, իսկ միւս մրդերից՝ ընդամենը 68 հազար:

Գինին մինչեւ այժմս պատրաստվում է բոլորովին նահապետական կերպով: Գինու տեսակները չափազանց շատ են: Ամենից նշանաւոր են Կախէթի, Երեւանի, Գանձակի, Գարթի, Իմէրէթի գինիները:

Կարգաւարտի գինին պարունակում է սպ. 6¹/₂90% Իմէրէթի 90% Կախէթի 9—100% Գանձակի 100% Ալազանի 11¹/₂—120% Երեւանի մինչեւ 150%

Գինու գործարանների թիւը, ակցիդի խառնուրդի շնորհիւ, ընկել է: 1898-ին ձևացել էր 2,500 գործարան:

Արտահանած գինու քանակութիւնը վերջին հինգ տարիները եղել է ոչ աւելի քան 550,000 վեդրօ, ուրեմն երկրում մնում է մօտ հինգ միլիօն վեդրօ:

Երկրի մէջ գործածած սպիրտի քանակութիւնը պ. Պանտիւխով համարում է չորսը 25 միլիօն աստիճան: Այս հաշուով ամէն մի բնակչին (ըստ 1897 ժողովրդագրութեան՝ բնակչիներ թիւը 5¹/₂ միլիօն է). ընկնում է մօտ մի վեդրօ գինի եւ մօտ հինգ աստիճան սպիրտ, իսկ եթէ հինգը մասնադրականներն, (3,217,000), որոնք խմիչք չեն գործածում, այն ժամանակ կը մնայ մի միլիօն հաւակաւոր քրիստոնէյ եւ իւրաքանչիւրին կընկնի հինգ վեդրօ գինի եւ 25 աստիճան սպիրտ:

Սրանք են պաշտօնական թւերը:

Բայց յայտնի է, որ գաղտնի շատ է քաշվում թէ գինի եւ թէ արաղ: Մի քանիսների կարծիքով՝ Անգրիկական չինած գինու քանակութիւնը պիտի լինի ոչ պակաս քան 12 միլիօն: Հետեւաբար ամեն խմող չափահասին ընկնում է ամիսը մի վեդրօ:

բժ. Վ. Ա.

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Յունվարի 27-ին

Յունվարի 25-ին, Երեւանի քաղաքային խորհրդի հերթական նիստում, ի միջի այլ հարցերի, կարդացվեց ձայնաւոր-փաստաբան Մնա-

*) Հաշվում է դուռ սպիրտը, այսինքն՝ գումար-վում են սպիրտի աստիճանները: Եթէ օր. մի շիշ մէջ 400 աստիճան սպիրտ կա, 100 շիշի մէջ կը լինի 40000.

րով հազիւ կարողանայ ուղղել եւ ստուգել. բայց մինչեւ այժմ ոչ ոքին այդ ներդրածը չէ տեսնում: Եթէ կոնսերւտորիան հոգեւոր կառավարութիւններից պահանջում է գրքերի, օրացոյցների կամ այլ մատենաների մեծաւոր մար ապառիկներ, մինչդեռ վերջինս իր այդ հաշիւը սինօքի հետ արդէն վերջացրել է. կամ տեսնում էք գործակալը բարեհաճում է պատասխանել իրանից ապառիկ պահանջած ժամանակ, թէ ուղարկել է կոնսերւտորիա, սինօք, ապարան եւ այլն: Պատահել են դէպքեր, երբ գործակալը թողնելով կանօնաւոր ճանապարհը, մասնաւոր մարդու ձեռքով քահանաներից ստացած ձեռնարկներով ուղարկել է կաթողիկոսական դիւանին, իսկ հոգեւոր կառավարութիւնը բանից տեղեկութիւն չունենալով՝ իր ցուցակներում ապառիկ է հաշվում:

Երեւանի թեմը կաթողիկոսական թեմ է. իւրաքանչիւր փոխանորդ ուրեմն հաւասար իրաւունքներով կաթողիկոս-թեմակալի փոխանորդ պիտի համարվի: Բայց տեսէ՛ք ինչ քաւ է ստեղծվել: Երեւանի փոխանորդը տալով բը-լանի ունի «Փոխանորդ թեմակալին հայոց Երեւանայ» եւ գրութիւնների տակ ստորագրում է փոխ-թեմակալը Կարսի փոխանորդը գրում է «Երեւանի թեմակալի Կարոյ փոխանորդ», Տաթևիին՝ «Փոխանորդ հօտին Սիւ-նեաց», Երեւանի էլ «Հայրապետական փոխանորդ», Ալեքսանդրօպոլին՝ «Փոխանորդ վիճակին Ալեքսանդրօպոլի», Նախիջևանին՝ «Փոխանորդ Նախիջևանում»: Անուններն ու տիտղոսները դեռ ոչինչ. խնդիրն այստեղ իրաւունքների եւ պարտքի մէջ է: Երեւանի փոխանորդը իրան համարում է առաջնորդ, ուրեմն միւս

ցականների գրաւոր մի առաջարկութիւնը, որով պարտը խնդրում է քաղաքային վարչութեան՝ տիրանալ իր ձեռքում գտնվող քաղաքապետական 1900 քառակուսի սաժէն հողաբաժնին:

Քաղաքային խորհրդի այժմեան կազմը դեռ իր գործունէութեան սկզբից զարթեցրեց այսպէս անուանված «քաղաքային» հարցը: Տարիների ընթացքում քաղաքապետական բազմաթիւ հողաբաժնիներ դարձել են մասնաւոր մարդկանց սեփականութիւն. պարսպապատել, իւրացրել է այս կամ այն կտոր քաղաքապետական հողը նա, ով հասել է, եւ այսպիսով քաղաքի ծայրերում կազմվել են այգիներ, պարտէզներ եւ վարելահողեր ի հաշիւ քաղաքի: Այսպիսի յափշտակութիւններ չէին կարող վերադառնալ խորհրդի եւ վարչութեան այժմեան ղեկավարներին աչքից: Եւ անա քաղաքի կողմից դատարանին են յանձնվում քաղաքապետական հողաբաժնիների յափշտակութեան բազմաթիւ գործեր: Այդ հողերը ձեռքից ձեռք անցնելով, փաստաթղթից փաստաթուղթ կազմվելով՝ դատարանական գործադրութիւնը մի փոքր դժուարացրել են, թէեւ անկասկած է, որ վերջ ի վերջոյ այդ գործերը կը վճովեն յօգուտ քաղաքի:

Անա այս յափշտակված հողերից բաւական տարածութիւն ձայնաւոր Մնացականեանի գնել է մասնաւոր մարդկանցից: Այժմ, երբ այդ հողերի յետ ստանալու կարելիութիւնը անկերեւ է դարձել, միւս կողմից քաղաքապետը մասնաւոր կերպով դիմելով ձայնաւոր Մնացականեանին՝ խորհուրդ էր տուել դատաւարութեան տեղիք չը տալու եւ դատաւարական ծախքերի պատճառ չը դաժնալու: Համար ինքնաբերաբար քաղաքի վերադարձին քաղաքապետական հողը,—ձայնաւոր Մնացականեան վարչում է շատ խելացի, գրաւոր կերպով դիմելով քաղաքային վարչութեան եւ ինքնաբերաբար հրաժարվելով յօգուտ քաղաքի այն քաղաքապետական հողից, որը անցել է նրա ձեռքը մասնաւոր մարդկանցից:

Այսպիսի վարժուածը խելացի համարվելով այն տեսակետից, որ այդ հողը յամենայն դէպս գնալու էր ձայնաւոր Մնացականեանի ձեռքից, միւս կողմից կարող է ծառայել օրինակ այն բազմաթիւ մարդկանց համար, որոնք քաղաքապետական հողը ապօրինի կերպով տիրելուց յետոյ՝ դեռ յամառ կերպով շարունակում են ապարդիւն դատաւարութիւն:

Ա.—Դօ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Բազու, յունվարի 27-ին

Այս քանի օրերս «Մշակում» կարդացինք մի յօդուած վրաց թատրոնի դերասան Ալեքսեի-Մեխակի մասին, իմացանք թէ ինչպէս վրաց հասարակութիւնը իր բողոքներով քաշալերել է տաղանդաւոր դերասանին եւ ցոյցներ է արել նրա դէմ տպով զրպարտութիւնների առիթով: Մենք, հայերս, այդպէս չենք: Ունենք մի

փոխանորդներն իրան ստորագրված, բայց միւս փոխանորդները, յենվելով օրէնքի վրա, ճանաչում են իրանց ոչ Երեւանի փոխանորդի փոխանորդ, այլ Երեւանի թեմակալի—Կաթողիկոսի փոխանորդ: Սինօքն էլ համա նախն է իւր-փում համ մեխիւն, եւ՝ ճանաչում է Երեւանի փոխանորդին թեմակալ, եւ՝ չէ ճանաչում: Մինչդեռ Կարսի իրիւմը Երեւանի թեմի հետ միացնելուց յետոյ, երբ հաստատվեց հոգեւոր կառավարութիւն եւ փոխանորդութիւն, իր հրամանի մէջ նա որոշապէս ասում է. «Իսկ փոխանորդը կոչվելու է հայրապետական փոխանորդ» (ափսոս մենք ձեռքի տակ չունենք թեմական ու թղթի №-ը): Եթէ Կարսի փոխանորդը հայրապետական է, ապա ուրեմն միւս փոխանորդներն էլ հայրապետական են նրա պէս, հետեւաբար հաւասար իրաւունքներով: Բայց իրօք այդպէս չէ. քանի անձնական յարաբերութիւնները լաւ են Երեւանի փոխանորդի հետ, նրան ճանաչում են անմիջական իշխանաւոր, բայց, երբ ինչ-ինչ պատճառներով լարվում են (իսկ այդ մեղաւորում սովորական բան է), այն ժամանակ համարում են նրան հաւասար իրանց: Այդ բանը 1898 թւին բաւական պարզ ասվեց, երբ Երեւանի փոխանորդը Ներսէս արքեպիսկոպոսը ուղեց միջամտել Նախիջևանի փոխանորդ Կիրիլի վ. Կիրեւ-դեանի գործերուն:

Մի փոխանորդութեան մէջ յիշատակում են Երեւանի փոխանորդին պատարագի մէջ, մի օրիշ փոխանորդութեան մէջ՝ ոչ: Մի փոխանորդ դէպք եղած ժամանակ դիմում է իր թեմակալին, Կաթողիկոսին, որ ուրիշ՝ Երեւանի փոխանորդին, իբրեւ անմիջական իշխանա-

դերասանուհի, որով կարող ենք պարծենալ, որ միշտ զարդարել է հայ բեմը: Դա տիկին Սիրանոյն է: Բայց անա երեք ամիս է, ինչ մի ամիս. Ե. Բոյն է դրել այստեղի «Касимъ» լրագրում եւ շարաթ մէկ կամ երկու անգամ պարտք է համարում անտեղի կերպով վերաբերել տիկին Սիրանոյնին եւ յայտնի կենդանու նման աքաջիներ տալ: Նախ պարտք սկսեց «Ասֆօօ» քննադատութիւնից եւ ասաց, թէ տիկինը կաւ-սիկական ձեւեր չունի: Երեւի պ. Ե. Կիրիլի ձեւեր տեսել է մեր Մարգարանում. իսկ մենք կարող ենք հաւատաւորել պարսին, որ նրանից աւելի հասկացող մարդիկ հիացած էին նրա խելից:

Բայց այդ դեռ ոչինչ: Յունվարի 22-ին պ. Արէլեանի բենեֆիտն էր. տիկին Սիրանոյնը չէր մասնակցում: Հետեւաբար նրա մասին կարիք էլ չը կար բան գրելու. բայց տեսէ՛ք թէ այդ պ. Ե.—ն ինչ է անում: Գովաւանելով պ. Արէլեանին՝ յանկարծ, առանց պատճառի, անցնում է հայ ժողովրդականներին եւ յարձակվելով հայ հասարակութեան վրա, տիկին Սիրանոյնին անուանում է «шаблонная актриса» եւ կոկորդիլոսի արտասուքներ է թափում, թէ մեծ համակրական ցոյցներ են պատրաստվում նրա համար:

Այստեղ արդէն քննադատի աստիճան հոգին է երեւան եկած: Եթէ նա առհասարակ ցոյցների դէմ է, այն ժամանակ իր կոկորդիլոսական արտասուքները պիտի թափէր տ. Մայսուրեանին, տ. Աւետեանի, պ. Արէլեանի բենեֆիտներից առաջ, իսկ երբ մեղք չէր ցոյցներ անել ի պատիւ այդ բեմական գործիչների, ինչու պէտք է կոկորդիլոսեան արտասուքներին արժանի մեղք համարվի ցոյցներ անել ի պատիւ տ. Սիրանոյնի, որ 29 տարի ծառայել է հայ բեմին եւ այժմ էլ նրա առաջին աստղն է:

Հայ հասարակութիւնը, ի հարկէ, մի ինչ-որ Ե-ի ասածներով չը պիտի ճանաչէ մեր առաջնորդները: Գերաստեւուն, որ խորին յարգանք է դուր ամեն տեղ, ուր բեմ է դուրս եկել: Եւ եթէ մենք բերում ենք մի նմուշ «Касимъ»-ի էջերին ապաւինած այս քննադատութիւնից, մեր նպատակը այն է միայն, որ ցոյց տանք, թէ ինչիւր կարող է անել ստոր կիրքը...

Ս.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Բաթում, դեկտեմբերի 28-ին

Իմիմիճին «Արարատ» ամսագրի նույնանուն տետրի մէջ Ն. սարկաւազ Մէլիք-Թաւադեանի գետնից էր մի յօդուած՝ «Բանաստեղծի տրու-տեսական ապագայութեան մասին մի քանի խօսք» վերնագրով: Այդ յօդուածը իր պատմական, կուսակական ու ժամանակակից տեսակետով համարելի լինելու հետ, արժանի է անանձին ուշադրութեան մասնաւոր մեր այն հրապարակաստների համար, որոնք քահանաներին ոտնիկ սահմանելը համարում են վնասակար նորութիւն եւ մեր եկեղեցու ոգուն ոչ համապատասխանող:

Ն. սարկաւազը ասում է, որ ես իբր թէ Բաթումում քահանաներին ոտնիկ սահմանելու

ւորի կամ հենց մի եւ նայն փոխանորդը մի դէպքում դիմում է Երեւան, միւս դէպքում էջմիածին, մի երրորդ դէպքում՝ ինքնիշխան կարգադրում:

Իսկ թէ ինչպիսի մէկը միւսին հակառող թղթեր են թիւում մեր աստեաններում, բաւական է մի շարաթ նստել աստեանկալական աթոռի վրա եւ ուշի ուշով կարդալ արձակվող հրամանները: Մի օր կարգադրում են, դիցուք, քահանաներին հոգեւոր կառավարութիւններ մէջ չը ընել, այլ ուղարկել կոնսերւտորիա, մի օրիշ անգամ՝ յանդիմանում են հոգեւոր կառավարութեան, որ անպատրաստ տիրացունք է առաջարկում. այսօր մերժում են մէկի գործը, վաղը նորից պահանջում, մէկ հրամանում են դրամներն ուղարկել կոնսերւտորիա, մէկ էլ ամիսներից յետոյ հրամայում են սինօք ուղարկել: Հակասական թղթերի, կարգադրութիւնների թիւ ու համարը չը կայ:

Այս դեռ կանցելիաբանական պակասութիւններ են, որոնք տանելի կը լինէին, եթէ ղեկավարներն ու պաշտօնականները հմտութեամբ գործադրել կարողանային, բայց արի տես, որ հրաման գործադրողները անվրդով իրանց ստորադրեալներին «հրամայեցիներով» կերակրում են, առանց հասկանալու, որ ժողովուրդը որքան էլ տղէտ է, բայց այնու ամենայնիւ հասկանում է եւ դրա համար էլ երբ մի կարգադրութիւն մասին լսում է, իսկոյն աւելացնում է. «Եզրու տեսնե՛ք ինչ նոր կարգադրութիւն է լինելու»: Իսկ այս թերահաւատութիւնը դէպի օրէնքը եղած կարգերը տանում է հոգեւոր իշխանութիւնը դէպի կորուստ:

(Նը շարունակի)

Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванская ул., № 27